ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31.08.2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Կ. Պ. Պողոսյան

Քարտուղար՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի 2021-22 ուստարվա նախապատրաստական աշխատանքների քննարկում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. Արտակարգ դրության պայմաններում ֆակուլտետում նախատեսվող լսարանային և հեռավար կազմակերպվելիք դասընթացների քննարկում: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
4. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
5. Առաջին լուծարքային քննաշրջանի անցկացման մասին: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների 2021-22 ուստարվա առաջին

կիսամյակի ուսումնական բեռնվածությունները: Զեկուցողը նշեց, որ դասախոսները պետք է սեղմ ժամկետում ամբիոններ ներկայացնեն առարկայական փաթեթները:

Դեկանը նշեց, որ ուսումնական պարապմունքները կսկսվեն սեպտեմբերի մեկից՝ առկա և հեռավար տարբերակներով: Արդեն պատրաստ են առաջին կիսամյակի դասատախտակները, գարնանային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ համավարակի պայմաններում առաջացած արտակարգ իրավիճակների պայմաններում նախատեսվում են դասերը կազմակերպել հիբրիդային եղանակով՝ լսարանում և Zoom հարթակով: Զեկուցողը նշեց, որ ամբիոններում իրականացվել են քննարկումներ, և կիսամյակի ընթացքում պարապվելիք առարկաներն արդեն խմբավորվել են: Լսարանում նախատեսվում են իրականացնել դասընթացների զգալի մասը, իսկ որոշ դասախոսություններ՝ հեռավար: Այսպես՝ ամբողջապես Zoom հարթակով են իրականացվելու հետևյալ դասընթացները՝ «Սոցիալական հոգեբանություն», «Կրթության հոգեբանություն» (դասախոս՝ հ.գ.դ. Ս. Գևորգյան), «Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-2» (դասախոս՝ մ.գ.դ. Ջ. Գյուլամիրյան), «Անգլերեն -7 թոյֆլ», «Բիզնես անգլերեն» (դասախոս՝ բ.գ.թ. Գ. Մադոյան), «Սեռի հոգեբանություն» (դասախոս՝ հ.գ.թ., Ս. Պողոսյան): Բացի նշվածներից, կան նաև դասընթացներ, որոնց ժամաքանակի մի մասն է իրականացվելու Zoom-ով՝ պայմանավորված դասախոսների հերթափոխների խնդիրներով: Այդ դասընթացներն են՝ «Օտար լեզվի պատմություն» (դասախոս՝ բ.գ.թ. Ա. Չուբարյան), «Անձի տեսություններ» (դասախոս՝ հ.գ.թ. Ա. Կոբելյան),

«Հոգեախտորոշում» (դասախոս՝ հ.գ.թ. Ս. Պողոսյան)։ Նա նշեց, որ արդեն իսկ պատրաստ են դասացուցակները։ Ամբիոնների գործավարները նախատեսվող դասընթացների մասին սահմանված ժամանակահատվածում կտեղեկացնեն պարապող դասախոսներին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արտակարգ դրության պայմաններում ֆակուլտետում նախատեսվող լսարանային և հեռավար կազմակերպվելիք դասընթացների կազմակերպման գործընթացը գնահատել բավարար։

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը։ Նա նշեց, որ ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ։ Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի գիտական խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է։ Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի հաստիքացուցակում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ։ Բացի այդ՝ գիտխորհրդի կազմի ուսանող-անդամներից ոմանք ավարտել են ուսումնառությունը, և կարիք կա թափուր տեղերը համալրելու։ Զեկուցողը ներկայացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից։ Խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50%-ը։ Զեկուցողը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը։ Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են

ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով:

Զեկուցողը նաև նշեց, որ գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները: Նշվեց, որ գիտական խորհրդի անդամների 25%-ը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացրել է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը և ներկայացրել վեց ուսանողների թեկնածություն:

Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր առաջարկությունները: Ի վերջո ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Աղուզումցյան Ռուբեն Վազգենի- հ.գ.դ., պրոֆեսոր, կրթական ծրագրի պատասխանատու-անդամ /փոխարինել է Վաչիկ Արամայիսի Բրուտյանին /
2. Զուրաբյան Մարատ Հովիկի – բ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի պատասխանատու –անդամ /փոխարինել է Անժելա Ժորայի Այդինյանին/
3. Մարգարյան Հասմիկ Կարենի – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ- Պատմություն կրթական ծրագրի 2-րդ կուրս-անդամ /փոխարինել է ՈՒԳԸ նախկին նախագահ Ալինա Կոստյայի Գրիգորյանին/
4. Վասիլյան Տաթևիկ Վարուժանի –Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրս-անդամ /փոխարինել է Միլենա Համազասպի Մելիքսեթյանին/
5. Ստեփանյան Մերի Արթուրի – Հայոց լեզու և գրականություն – 3-րդ կուրս-անդամ /փոխարինել է Գոհար Աշոտի Մխիթարյանին/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում հանգամանորեն քննարկվել են ֆակուլտետի

գիտական խորհրդի նոր անդամների թեկնածությունները: Արտահայտվողները բարձր գնահատեցին առաջադրված թեկնածուների գիտական և մասնագիտական որակները:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն, որով առաջադրված թեկնածուները միաձայն ընտրվեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քվեարկության արդյունքները հաշվի առնելով՝ հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի նոր անդամների թեկնածությունները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Կ. Պողոսյանն ընդգծեց, որ նշված կիսամյակում ֆակուլտետում նկատելի ավելացել է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը բավարար հիմք է նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Քոչարյանը: Նա մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, և այդ պատճառով նպատակահարմար է Նունե Քոչարյանին առաջադրել «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Է. Թեմրազյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ

կուրսի ուսանող Էդիտա Գրիգորյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, և այդ պատճառով նպատակահարմար է Էդիտա Գրիգորյանին առաջադրել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Լ. Թումանյանը «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց 3-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Խաչատրյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Անուշ Խաչատրյանը ցուցաբերում է հասարակական ակտիվություն և օրինակելի վարք: Զեկուցողը առաջարկեց Անուշ Խաչատրյանին ներկայացնել որպես «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Մարդանյանը ներկայացրեց, որ տվյալ մասնագիտության ուսանողներից առաջադիմությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ուսանողուհի Լուսյա Շախպարյանը: Նա վերջին չորս կիսամյակում ունի անընդմեջ գերազանց առաջադիմություն, և այդ պատճառով նպատակահարմար է Լուսյա Շախպարյանին առաջադրել «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց 4-րդ կուրսի ավագ Մերի Եգանյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Մերի Եգանյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց նաև 3-րդ կուրսի ավագ Տաթևիկ Վասիլյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ, Տաթևիկ Վասիլյանը ցուցաբերում է հասարակական ակտիվություն և օրինակելի վարք: Զեկուցողը առաջարկեց Տաթևիկ

Վասիլյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Նունե Քոչարյանին որպես «Մխիթար Գոշ», Լուսյա Շախպարյանին՝ «ԵՊՀ», Էդիտա Գրիգորյանին՝ «Շառլ Ազնավուր», Մերի Եգանյանին՝ «Դավիթ Անհաղթ», Տաթևիկ Վասիլյանին՝ «Վազգեն Սարգսյան» և Անուշ Խաչատրյանին՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Կ. Պողոսյանը: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց 2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Նա նշեց, որ լուծարքների հանձնումը նախատեսված է օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 20-ը: Նշվեց, որ պատրաստ են առաջին լուծարքային շրջանի անհատական գրաֆիկները և հանձնարարեց ամբիոնի վարիչներին՝ առանձնահատուկ ուշադրության դարձնել պարտքերի վերահանձնման գործընթացներին: Անկախ պարտք ունեցող ուսանողների թվի՝ լուծարքները պետք է անցկացվեն հանձնաժողովի ներկայությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Լուծարքային շրջանի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման գործընթացը գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան